ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարությունյան Կ.Շ., Հակոբյան Լ.Գ., Շահինյան Մ.Ս.[*]

Ամփոփում: Պարենային անվտանգության իրավիճակի լիարժեք և համապարփակ գնահատումը, միտումների վերլուծությունները և վաղ կանխատեսումները ամենևին պարզ խնդիրներ չեն և հետևաբար պահանջում են զարգացած մեթոդական շրջանակի և գործիքակազմի կիրառում:

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության գնահատման շրջանակի, մեթոդաբանության ու կառուցակարգերի թույլ կողմերի և բարելավման գործնական առաջարկությունների ներկայացմանը: Քննարկումն ընդհանուր առմամբ վերաբերվում է մեթոդաբանության զարգացմանը, գնահատման լիարժեքության և համակողմանիության ապահովմանը, ներկայացվում են զարգացման առաջարկվող մոտեցումներ:

Ըստ էության առանձնացված հիմնական խնդիրները մի կողմից վերաբերվում են գոյություն ունեցող մեթոդաբանության հիմնական բացթողումների վերացմանը՝ պարենային հաշվեկշռի և ինքնաբավության գնահատականների ճշգրտության և համապատասխանության մեծացման տեսանկյունից, իսկ մյուս կողմից՝ պարենային անվտանգության մակարդակի համապարփակ գնահատականների կիրառման պահանջին:

Բանալի բառեր. Պարենային անվտանգություն, պարենային հաշվեկշիռ, պարենի առաջարկ և օգտագործում, սպառման էներգետիկ արժեք, անվտանգության ագրեգացված և ինտեգրալ գնահատականներ

JEL Classification: Q18, B41, O13, O53.

1. Ներածություն

Պարենային անվտանգության միտումների վերլուծությունները, պա-

[*] Կարինե Շավարշի Հարությունյան — ՀՊՏՀ Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի դոցենտ, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի փորձագետ, e-mail: kharutyunyan@edrc.am
Լիլիթ Գարիկի Հակոբյան — Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի փորձագետ, e-mail: lhakobyan@edrc.am
Մհեր Սամվելի Շահինյան — ՀՀ էկոնոմիկայի նախարարության Արդյունաբերության զարգացման վարչության գլխավոր մասնագետ, ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ

ռենային անվտանգության իրավիճակի գնահատումները և վաղ կանխատեսումները բավականին բարդ գործընթացներ են՝ հետևաբար պահանջում են զարգացած մեթոդական շրջանակի և գործիքակազմի կիրառում:

Հայաստանում պարենային անվտանգության գնահատման և մոնիտորինգի համար որպես գործիք կիրառվում է պարենային հաշվեկշիռը, որը նպատակաուղղված է որոշակի ժամանակահատվածում պարենի առաջարկի վերաբերյալ համապարփակ տեղեկատվության ներկայացմանը: ՀՀ-ում պարենային հաշվեկշիռը կազմվում է 2002 թվականից ի վեր՝ հիմքում ունենալով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից առաջարկված պարենային հաշվեկշիռների կազման մեթոդաբանությունը:

Կիրառվող մեթոդներն, ըստ էության, թույլ են տալիս լավագույն դեպքում արտացոլել նախորդող ժամանակահատվածում (տարում) պարենի առկայությունը և օգտագործումը: Պարենային հաշվեկշիռը մի կողմից ներկայացնում է պարենի ամբողջական առաջարկը, իսկ մյուս կողմում՝ պարենի օգտագործման ուղղությունները: Ընդ որում, պարենի ամբողջական առաջարկը ներկայացնում է արտադրության, ներմուծման և հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առկա պաշարների ցուցանիշների հանրագումարը, իսկ պարենի օգտագործման ուղղությունները ներառում է սննդամթերքի օգտագործումը, անասնակերը, կորուստները, վերարտադրումը (սերմացու, ինկուբացիա և այլն), արտահանումը, օգտագործման այլ ուղղությունները և պաշարները հաշվետու ժամանակաշրջանի վերջում (ՀՀ ՎԿ, 2020, էջ 77-78):

Պարենի արտադրության, ներմուծման և արտահանման վիճակագրությունը ստացվում է Ազգային հաշիվների և վճարային հաշվեկշռի համակարգերից, իսկ արդեն կորուստները, վերարտադրումը, պաշարները և այլն՝ հիմնականում առկա գործակիցների կիրառմամբ և ընտրանքային հետազոտությունների միջոցով: Անկախ այս մասով տեղեկատվության որակից և ներկայացուցչականության խնդիրներից, որոնք ընհանուր առմամբ, ևս ենթակա են հասցեագրման, կիրառվող մեթոդները դժվար է համարել բավարար՝ տնտեսությունում պարենային անվտանգությունը լիարժեք գնահատելու և, մասնավորապես, լիարժեք կանխատեսելու համար:

2. Մեթոդաբանություն և քննարկման շրջանակ

Մինչ մեթոդաբանության թույլ կողմերին և բացերին անդրադառնալը և զարգացման կոնկրետ հնարավորությունների ներկայացումը, նախ անդրադառնանք պարենային անվտանգության գնահատման նպատակներին կամ խնդիրներին: Նկատենք, որ առկա են միմյանցից խիստ տարբեր (թեև փոխկապակցված) երկու առանձին խնդիրներ կամ գնահատման մակարդակներ: Դրանք են՝

1) **Գնահատել պարենային անվտանգության առկա մակարդակը,** սա ուղղված է իրավիճակի մոնիտորինգին և արագ արձագանք պահանջող հնարավոր խնդիրների բացահայտմանը, որը թույլ կտա կառավարել և ուղղորդել ընթացիկ ծրագրերը:
2) **Կանխատեսել/գնահատել պարենային անվտանգության սպասվող միտումները և մակարդակը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում**: Ստացված արդյունքները պետք է կիրառվեն քաղաքականությունների և երկրաժամկետ ծրագրերի նպատակադրման և մշակման գործընթացում՝ ներառյալ գյուղատնտեսական, սոցիալական, առողջապահական, բնապահպանական, տնտեսական, ներդրումների և արտահանման խթանման ծրագրերը և քաղաքականությունները:

Նշված առաջին խնդիրն ըստ էության իրականացվում է ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից՝ պարենային հաշվեկշռի և ինքնաբավության մակարդակի գնահատումների միջոցով, ընթացիկ տարվա գնահատումները/սպասումներն ապահովում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչությունը՝ գնահատելով ընթացիկ տարվա պարենային հաշվեկշռի հնարավոր զարգացումները: Այս դեպքում գործ ունենք կարճաժամկետ գնահատականների հետ՝ մի դեպքում փաստացի, մյուս դեպքում՝ սպասվող: Գնահատման այս մակարդակում քննարկման առարկան ընդհանուր առմամբ կվերաբերվի գոյություն ունեցող մեթոդների համալրմանը, գնահատման լիարժեքության և համակողմանիության ապահովմանը, բացերի վերացմանը:

Գնահատման երկրորդ մակարդակում հիմնական խնդիրը վաղ գնահատման համակարգի բացակայությունն է:

3. Պարենային անվտանգության գնահատման համակարգի թույլ կողմերը

Պարենային անվտանգության լիարժեք և համապարփակ գնահատումն ամենևին պարզ խնդիր չէ, քանի որ գոյություն ունեցող մեթոդները և ինդիկատորները թույլ են տալիս գնահատել ուսումնասիրվող խնդիրը միայն այս կամ այն դիտանկյունից: Ուստի այս մակարդակում մեր առջև ծառացած հիմնական խնդիրը մի կողմից գոյություն ունեցող մեթոդաբանության հիմնական բացթողումների վերացումն է՝ պարենային հաշվեկշռի և ինքնաբավության գնահատականների ճշգրտության և համապատասխանության մեծացման տեսանկյունից, իսկ մյուս կողմից՝ պարենային անվտանգության մակարդակի համապարփակ գնահատականների կիրառումը կամ ներկայացումն է:

Ստորև առանձնացրել ենք պարենային անվտանգության գնահատման կիրառվող մեթոդաբանության այն բացերը կամ թույլ կողմերը, որոնք մեր գնահատմամբ հետագա զարգացման կարիք ունեն, նաև դրանց հետագա բարելավման առաջարկվող մոտեցումները.

- **Մննդամթերքի սպառման ցուցանիշները էականորեն շեղվում են տարբեր վիճակագրական համակարգերում:**

Պարենային հաշվեկշռում սննդամթերքի սպառումը հաշվարկվում է որպես պարենամթերքի առաջարկի և օգտագործման մյուս բոլոր ուղղությունների մնացորդային տարբերություն (ՀՀ ՎԿ, 2020, էջ 77): Նման մոտեցման պատճառը տվյալ ժամանակահատվածում բնակչության սպառման վիճակագրության հասանելիության խնդիրներն են: Սակայն, այս մոտեցման դեպքում մյուս ցուցանիշներում վիճակագրական սխալները և շեղումները կարող են էականորեն շեղել սպառման ցուցանիշը դրա իրական մակարդակից: Մասնավորապես, դա կարող է պայմանավորվել պարենամթերքի կորուստների և պաշարների գնահատման մոտեցումներում առկա բացերով:

Ստորև գծապատկերը ներկայացնում է 2018 թվականին Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (այսուհետ՝ ՏՏԿԱՀ) և Պարենային հաշվեկշռի պարենամթերքի մի շարք տեսակների տարեկան սպառման վիճակագրությունը: Ինչպես տեսնում ենք վիճակագրական այս երկու աղբյուրներից ստացվող տվյալների շեղումն էական է, արդյունքում մեծ է նաև սպառման էներգետիկ արժեքների շեղումը: Այսպես, համաձայն ՏՏԿԱՀ մեկ շնչի հաշվով սպառման էներգետիկ արժեքը կազմել է 2,117 կկալ/օր, իսկ համաձայն պարենային հաշվեկշռի՝ 2,778.4 կկալ/օր:

Գծապատկեր 1. Պարենամթերքի մեկ շնչի հաշվով սպառման ծավալներն ըստ պարենային հաշվեկշռի և ՏՏԿԱՀ տվյալների, 2018 թվական, կգ/տարի



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե
*ՏՏԿԱՀ-ի դեպքում՝ հացամթերք

Այսպիսով, ցուցանիշների շեղումներն էական են և, անկախ հաշվառման մեթոդներից և ստանդարտներից, դրանք չեն կարող գերազանցել ընդունված թույլատրելի սահմանները: Հետևաբար, անհրաժեշտ է, որ վիճակագրության հավաքագրման և մշակման պատասխանատուները պարբերաբար իրականացնեն համեմատական քննություններ և իրականացվի գործող վիճակագրական համակարգերի սինխրոնացում: Պետք է ձևավորել և ներդնել վիճակագրական տարբեր աղբյուրներից հավաքագրված միևնույն ցուցանիշների ստուգաճշտման համակարգեր:

- **Պարենամթերքների ինքնաբավության մակարդակի գնահատման հիմքում պարենամթերքի փաստացի սպառման ծավալներն են:**

Պարենային անվտանգությունը բնութագրող կարևոր ցուցանիշը ինքնաբավության մակարդակն է, որը ցույց է տալիս երկրի՝ տվյալ պարենի նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը սեփական միջոցների հաշվին (ՀՀ ՎԿ, 2020, էջ 78):

Ինքնաբավության ցուցանիշը ներկայում հաշվարկվում է հիմք ընդունելով պարենամթերքի փաստացի սպառման ցուցանիշը: Մինչդեռ, այս մոտեցումը սահմանափակ է և թույլ չի տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել երկրում պարենի ինքնաբավության մակարադակի մասին՝ ըստ տարբեր կարիքների:

Առաջարկվում է, ի լրումն այս մոտեցման, ներդնել նաև ինքնաբավության այնպիսի գնահատականներ, որոնց հիմքում բնակչության նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պարենամթերքի տարբեր զամբյուղներ են (առնվազն նվազագույն կենսապահովման մակարդակում): Կիրառվող մոտեցումը հնարավորություն չի տալիս գնահատել տնտեսությունում անհրաժեշտ սննդամթերքի սպառման այն ծավալները, որն անհրաժեշտ է առողջ հասարակության ձևավորման, սննդի ապահովության և սնուցման խնդիրները լուծելու համար: Առաջարկվող մոտեցման դեպքում հնարավոր կլինի նաև գնահատել տնտեսության դիմակայունությունը՝ առանց բնակչությանը շոկերի ենթարկելու պարենային ճգնաժամերի դիմակայելու հնարավորությունը:

Գծապատկերը ներկայացնում է նորմատիվային և փաստացի տարբեր սպառման զամբյուղների էներգետիկ արժեքներ:

Գծապատկեր 2. Բնակչության սպառման էներգետիկ արժեքը 2018թ., մեկ շնչի հաշվով, կկալ/օր



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե և հեղինակների հաշվարկներ

Այսպիսով, հետևելով մի շարք երկրների փորձին, օրինակ Բելառուսի, պետք է կիրառել կենսապահովման զամբյուղի տարբեր մակարդակներ, որոնք կենթադրեն տարբեր էներգետիկ արժեքների հասանելիության հնարավորություններ: Այդ մակարդակները հաջորդաբար պիտի նկարագրեն պարենի բավարարության տարբեր վիճակներ՝ քանակական բավարարությունից մինչև անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովում:

Պարենի մատչելիության և օգտագործման տեսանկյունից կարևոր է նաև, որ ազգային վիճակագրության կողմից թողարկվեն ոչ միայն բնակչության սպառման էներգետիկ արժեքները, նաև սպառման բովանդակությունն ըստ հիմական սննդատարրերի, առնվազն սպիտակուցների և ճարպերի մասով, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված և կիրառական վիճակագրություն է: FAO-ի կողմից Հայաստանի համար իրականացվում են նման գնահատումներ և հրապարակվում FAOSTAT վիճակագրական տվյալների շտեմարաններում[1]:

- **Պարենամթերքների ինքնաբավության մակարդակի գնահատումը հաշվի չի առնում ներքին արտադրության մեջ ներմուծված հումքի մասնակցությունը.**

Ինչպես նշվեց, ինքնաբավության մակարդակը ցույց է տալիս տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը սեփական արտադրության հաշվին: Այսինքն, այս մոտեցման հիմքում երկրում կոնկրետ պարենամթերքի արտադրության ծավալներն են՝ առանց հաշվի առնելու վերջինիս ներմուծված հումքի մասնակցության չափը:

Այս մոտեցումը ունի թերություն և կարող է կեղծ պատկեր ձևավորել, եթե թողարկված արտադրանքի արտադրությունն էականորեն հիմնվում է ներմուծման վրա: Օրինակ, Հայաստանում շաքարի ինքնաբավության մակարդակը գնահատված է 73 տոկոս, սակայն ամբողջ արտադրությունը հիմնված է շաքարի հումքի ներմուծման վրա: Շաքարի հումքի ներմուծման բացակայության կամ անհնարինության դեպքում շաքարի ինքնաբավության ցուցանիշը կդառնա զրոյական: Այսպիսով, առաջարկվում է ինքնաբավության գնահատումը համալրել նաև ներմուծման նկատմամբ ճշգրտված ցուցանիշով (արտադրության ծավալներից աբստրահել ներմուծման հաշվին արտադրությունը).

Ինքնաբավության ճշգրտված ցուցանիշ =
(արտադրություն – ներմուծման հաշվին արտադրություն) /
(արտադրություն + ներմուծում – արտահանում)

[1] http://www.fao.org/faostat/en/#data/FS

- **Պարենաթերքի ինքնաբավության մակարդակը գնահատվում է առանձին ապրանքատեսակների գծով և բացակայում է երկրի ինքնաբավության մակարդակի մեկ ընդհանուր/ագրեգացված գնահատականը:**

Ի լրումն առանձին պարենամթերքների գծով ինքնաբավության գնահատականների, շատ կարևոր է նաև ընդհանուր/ագրեգացված պարենային ինքնաբավության մակարդակի գնահատականի առկայությունը: Շատ դեպքերում որպես այդպիսին օգտագործվում է հաշվեկշռում ընդգրկված պարենամթերքների ինքնաբավության մակարդակների միջին գնահատականը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ընդգրկված պարենամթերքները չեն կարող պարենային անվտանգության տեսանկյունից նույն դերը և կշիռն ունենալ, ուստի կարևոր է առնվազն ինքնաբավության կշռված մակարդակի հաշվարկը և հետևաբար առանձին պարենամթերքների կշիռների գնահատումը:

Որպես առանձին պարենամթերքների կշիռների գնահատական կարելի է վերցնել յուրաքանչյուր պարենամթերքի փաստացի սպառման և ընդամենը պարենի սպառման հարաբերակցությունները.

$$r_i = \frac{c_i p_i}{\sum c_i p_i},$$

որտեղ՝ c_i –ն i-րդ տեսակի պարենամթերքի սպառման ծավալն է, իսկ p_i-ն i-րդ տեսակի պարենամթերքի գինն է:

Ստորև ներկայացված է հավասար կշիռներով և համաձայն առաջարկվող մոտեցման պարենամթերքի ինքնաբավության ագրեգացված մակարդակների գնահատականները: Համաձայն առաջին (պարզ) մեթոդի Հայաստանում պարենամթերքի ինքնաբավության մակարդակը կազմում է 66.4 տոկոս, իսկ համաձայն երկրորդ (կշռված) մեթոդի՝ 68.9 տոկոս:

Ինքնաբավության ագրեգացված այս գնահատականը հնարավորություն է տալիս հայաստանցի սպառողի սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ զբաղեցնող պարենամթերքների (հացամթերք, միրգ, բանջարեղեն, կաթնամթերք և մսամթերք) մասնակցությունը ընդհանուր ինքնաբավության գնահատականի հաշվարկում մեծացնել, ինչպես նաև նվազեցնել այնպիսի պարենամթերքների մասնակցությունը, որոնց դերը հայաստանցու սպառման կառուցվածքում փոքր է (վարսակ, հատիկաընդեղեն, շաքար, ձուկ, խաղող):

Աղյուսակ 11. Ինքնաբավության ագրեգացված մակարդակի գնահատականներ, 2019թ., տոկոս

Պարենամթերքներ[2]	Ինքնաբավ. մակարդակ	Մասնակց.-ը ինքնաբավ. գնահատականին, պարզ մեթոդ	Բնակչության սպառման կառուցվածք, ՏՏԿԱՀ	Մասնակց.-ը ինքնաբավ. գնահատականին, կշռված մեթոդ
Ցորեն	25.9	1.62	23.24	6.02
Վարսակ	83.4	5.21	0.06	0.05
Եգիպտացորեն	6.5	0.41	0.06	0.00
Բրինձ	0.0	0.00	0.83	0.00
Այլ հատիկավորներ	63.4	3.96	0.73	0.46
Կարտոֆիլ	101.1	6.32	2.89	2.92
Բանջարեղեն	102.4	6.40	13.02	13.33
Միրգ և հատապտուղ (բացի խաղողից)	104.0	6.50	13.71	14.26
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	38.2	2.39	1.08	0.41
Բուսական յուղ	1.5	0.09	2.77	0.04
Շաքար	73.0	4.56	0.80	0.58
Ձու	100.0	6.25	3.59	3.59
Կաթնամթերք	84.3	5.27	12.54	10.57
Մսամթերք	62.8	3.93	22.15	13.91
Ձուկ	113.1	7.07	1.65	1.87
Խաղող	103.6	6.48	0.87	0.90
Ընդամենը պարենամթերքի ինքնաբավություն	**66.45**	**66.45**	**100**	**68.93**

Աղբյուրը՝ Հեղինակների հաշվարկներ

- **Պարենային հաշվեկշիռը և պարենի ինքնաբավության գնահատականները պարենային անվտանգության ինտեգրալ գնահատականներ չեն:**

Համաձայն ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության սահմանման, պարենային անվտանգությունը ենթադրում է պարենի մատչելիության, պարենի առաջարկի կայունության, հասա-

[2] Համաձայն ՏՏԿԱՀ սպառման պարենային ապրանքների խմբերի: Պարենային հաշվեկշռի համեմատությամբ չի ներառում միայն գարին և տարեկանը:

րակության բոլոր անդամների համար պարենի հասանելիության, պարենի որակի և անվտանգության ապահովում: Հետևաբար պարենային անվտանգության գնահատականը պետք է և ցանկալի է, որ ներառի/արտահայտի անվտանգության մակարդակը՝ նշված բոլոր հարթություններում: Նման գնահատական կամ ինդիկատոր է հանդիսանում Պարենի անվտանգության գլոբալ ինդեքսը (ՊԱԳԻ)[3], որը հնարավորություն է տալիս բնութագրել պարենի Մատչելիությունը, պարենի Հասանելիությունը, պարենի Որակը և Անվտանգությունը, ինչպես նաև Բնական պաշարները և Ճկունությունը: Պարենի անվտանգության գլոբալ ինդեքսը (ՊԱԳԻ) ներկայացված է «Պարենի համակարգերի և շրջակա միջավայրի ամրապնդումը նորարարության և ներդրումների միջոցով» զեկույցում (The Economist Inteligence Unit Limited, 2019):

ՊԱԳԻ հաշվարկման նպատակն է պարզել, թե որ երկրներն են առավել շատ և նվազագույնը խոցելի պարենային անվտանգության տեսանկյունից: Այս ցուցանիշն առաջինն է, որ համակողմանիորեն ուսումնասիրում է պարենային անվտանգությունը 113 երկրներում և ընտրված հարթություններում:

Հայաստանն այդ երկրների ցանկում ներառված չէ: Ուստի, անհրաժեշտ ենք համարում, որ Հայաստանը պատասխանատու պետական մարմինների նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի իրականացնի ՊԱԳԻ հաշվարկ և ինստիտուցիոնալիզացնի ինդեքսի հաշվարկի, ներկայացման և պատասխանատվության ընթացակարգերը:

Ինդեքսը հանդիսանում է պարենային անվտանգության բոլոր հարթություններում անվտանգության բնութագրերի ինտեգրալ գնահատական, և ի լրումն՝ կարող է օգտագործվել աշխարհի տարբեր երկրների հետ համեմատական վերլուծություններ իրականացնելու, Հայաստանի դիրքը և առաջընթացը գնահատելու համար: Ինդեքսի առանձին ենթաինդեքսները ևս առանձի հարթությունների մասով կրում են նույն հնարավորությունները:

Չնայած ՀՀ ԷՆ նախաձեռնությամբ ինդեքսի գնահատման փորձեր 2019 թվականին Հայաստանում արվել են[4], սակայն մեթոդաբանությունը հստակեցման կարիք ունի, իսկ գնահատման պրոցեսը պետք է դրվի ինստիտուցիոնալ հիմքերի վրա և լինի շարունակական:

---

[3] https://foodsecurityindex.eiu.com

[4] https://www.mineconomy.am/page/1333

- **Հայաստանի և Արցախի պարենային հաշվեկշիռները մշակվում և ներկայացվում են իրարից անկախ: Հաշվարկման ընդհանուր մոտեցումը բացակայում է:**

ՀՀ և ԱՀ պարենային հաշվեկշիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու երկրների ազգային վիճակագրական մարմինները հաշվեկշիռները մշակումը և թողարկումը միմյանց հետ համաձայնեցված չեն, առավել ևս դրա մշակման հիմքում չի դրվում երկու հանրապետություններում միաժամանակ պարենի անվտանգության իրական մակարդակի գնահատման խնդիրը:

ԱՀ դեպքում հաշվեկշիռը կազմվում է ստանդարտ մոտեցմամբ, այսինքն պարենի հոսքերը դեպի Հայաստան և Հայաստանից Արցախ համապատասխանաբար դիտվում են որպես արտահանում և ներմուծում, և հետևաբար այս հաշվեկշիռը ի զորու է գնահատել ԱՀ որպես անկախ տնտեսական միավորի պարենով ապահովվածության մակարդակը: ՀՀ դեպքում արտաքին առևտրի վիճակագրությունը հաշվառում է ԱՀ հետ միայն էներգետիկայի ոլորտի հոսքերը[5]: Սա նշանակում է, որ պարենի հոսքերը երկու հայկական հանրապետությունների միջև չեն արտահայտվում ՀՀ պարենային հաշվեկշռում և հետևաբար ՀՀ պարենային հաշվեկշռի պարենի ապահովվածության գնահատականները շեղվում են իրական մակարդակներից: Ընդ որում, չգրանցվող պարենային հոսքերն, ընդհանուր առմամբ, ազդում են պարենի օգտագործման, մասնավորապես՝ բնակչության կողմից սպառման ծավալների հաշվառման վրա: Թե՛ այն դեպքերում, երբ առկա են պարենի հոսքեր Արցախից Հայաստան և թե՛ հակառակ դեպքերում՝ Հայաստանից Արցախ, արդյունքում սխալ են գնահատվում պարենի համապատասխան տեսակի սպառման ծավալները: Առաջին դեպքում դրանք արհեստականորեն հանգեցնում են սպառման ծավալների կրճատման, իսկ երկրորդ դեպքում՝ ծավալների աճի:

ՀՀ ՎԿ-ն և ազգային անվտանգության պատասխանատուների կոմից այս խնդիրը պետք է լրացուցիչ կարևորվի: Եթե հիմք ընդունենք իրական տնտեսական իրավիճակը և այն, որ ՀՀ-ն և ԱՀ-ն փաստացի մեկ ընդհանուր տնտեսական տարածքի մաս են հանդիսանում, ապա ազգային անվտանգության և ճգնաժամային իրավիճակների դիմակայման շարունակ սպառնոցող վտանգը պահանջում է մեկ ընդհանուր

[5] ՀՀ արտաքին առևտրի տվյալների բազա

պարենային վիճակագրության, մասնավորապես, միասնական պարենային հաշվեկշռի վարում:

Մյուս կողմից, թե՛ քաղաքական նկատառումներով և թե՛ ճշգրիտ վիճակագրության ձևավորման տեսանկյունից կարևոր է նաև երկու առանձին հաշվեկշիռների թողարկումը: Հետևաբար, ՀՀ պարենային հաշվեկշռի վիճակագրությունը պետք է շտկվի, արտահանման և ներմուծման ծավալներում պետք է ներառվեն Արցախի հետ պարենային հոսքերը: Սա հնարավոր կդարձնի առնվազն նվազեցնել պարենային հաշվեկշռի պարենի սպառման ծավալների շեղումները և ապահովել ՀՀ այլ վիճակագրական տեղեկատվության հետ համադրելիություն:

- **Պարենային անվտանգության տեղեկատվության թողարկման ժամկետները ուշացած են և ոչ սինխրոն:**

ՀՀ-ում պարենային անվտանգության վերաբերյալ հիմնական վիճակագրական տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում՝ արտացոլելով պարենի առկայությունը, մատչելիությունը և օգտագործումը: Սակայն պետք է նկատել, որ վիճակագրությունը ներկայացվում է ուշացած և հնարավորություն չի տալիս որոշում կայացնողներին հիմնվել թարմ վիճակագրական տվյալների վրա:

Այսպես, պարենային հաշվեկշռի վիճակագրությունը հրապարակվում է հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին կիսամյակի ավարտին, մինչդեռ այն լիովին հնարավոր է թողարկել առաջին եռամսյակի ավարտին:

Ի լրումն՝ բացակայում է նաև պարենային անվտանգության տարբեր բաղադրիչների ներկայացման ժամանակագրական կապը. այն դեպքում, երբ պարենի առկայությունը ներկայացվում է նախորդող տարվա համար, մատչելիությունը և օգտագործումը ներկայացնող վիճակագրությունը սովորաբար ունենում է երկու տարվա վաղեմություն: Սրա պատճառը ՏՏԿԱՀ հետազոտությունների արդյունքների ամփոփման ժամկետներն են, որը ՀՀ-ում տևում է գրեթե մեկ տարի (ՀՀ ՎԿ, 2019, էջ 15-16):

Հաշվետու տարվա վիճակագրական ցուցանիշների հրապարակման նման մեծ շեղումը, ըստ էության, ոչ կարևոր է դարձնում նաև պարենային հաշվեկշռի ցուցանիշների հետ համադրելիությունը և շտկումների իրականացումը: Կարևոր ենք համարում շեշտել, որ ՏՏԿԱՀ արդյունքների ամփոփման և հրապարակման նման մեծ և

հետաձգված ժամկետներն արդարացված չէ՝ հիմք ընդունելով նաև այլ երկրների պրակտիկան: Այնպիսի զարգացող երկիր, ինչպիսին է Ղրղզստանը (Национальный статистический комитет Кыргызской Республики, 2020) այս վիճակագրությունն ամփոփում է արդեն հետազոտությանը հաջորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում:

- **Բացակայում են պարենային անվտանգության վաղ գնահատման համակարգերը:**

Պարենային անվտանգության սպասվող միտումները և մակարդակը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում գնահատելը, ակնհայտ է, որ շատ ավելի բարդ է և պահանջում է համակողմանի մեթոդներ և տարբեր պատասխանատու գերատեսչությունների մասնակցություն: Պետք է արձանագրել, որ ընդհանրապես բացակայում են պարենային անվտանգության վաղ գնահատման համակարգերը և անհրաժեշտ է ջանքեր ներդնել դրանց ձևավորման, հիմնական դերակատարների և պատասխանատուների սահմանման ուղղությամբ:

Այս իմաստով կարևոր է տարբեր շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցությունը, տեղեկատվության հոսքերը, տվյալների որակը և դրանց հավաքագրման ժամկետները, մոնիտորինգի և գնահատման համակարգերը: Պարենային անվտանգության վաղ գնահատման համակարգերի հիմնական նպատակն է պարենային ճգնաժամերի կանխարգելումը և կառավարումը: Սրանք առաջին հերթին ներառում են սննդի անվտանգության ոլորտի տվյալների շտեմարանները և այդ տվյալների հիման վրա կատարված վերլուծություններն ու կանխատեսումները, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի գնահատումները, որոնք կարող են իրականացվել միայն օպերատիվ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման միջոցով:

4. Եզրակացություն

Այսպիսով, պարենային անվտանգության գնահատման կիրառվող մեթոդաբանական շրջանակը բավարար չէ երկրում պարենային անվտանգության և պարենային ապահովվածության մակարդակների համապարփակ գնահատման համար: Կիրառվող մոտեցումը հնարավորություն չի տալիս գնահատել տնտեսությունում անհրաժեշտ սննդամթերքի սպառման այն ծավալները, որն անհրաժեշտ է առողջ հասարակության ձևավորման, սննդի ապահովության և սնուցման խնդիրները լուծելու համար: Ինքնաբավության մակարդակի գնահատման գործող սխեմաներն առնվազն պետք է համալրել լրացուցիչ

գնահատականներով, որոնց հիմքում պետք է դրվեն սպառման որակական իմաստով տարբեր մակարդակներ ապահովող պարենային զամբյուղներ:

Բացի այդ, կարևորում ենք թե՛ ինքնաբավության մակարդակի ագրեգացված գնահատականի առկայությունը և թե՛ պարենի անվտանգության տարբեր բնութագրերը ներկայացնող ինտեգրալ գնահատականի ներդրումը:

Պարենային անվտանգության կայունության գնահատման տեսանկյունից կարևոր է նաև ինքնաբավության մակարդակի գնահատականների ճշգրտումը՝ ներմուծվող հումքի մասնակցությունը հաշվի առնելու համար:

Իրավիճակը պահանջում է նաև գործող վիճակագրական համակարգերի սինխրոնացում: Պետք է ձևավորել և ներդնել վիճակագրական տարբեր աղբյուրներից հավաքագրված միևնույն վիճակագրության շեղումների բացահայտման և ուղղման համակարգեր: Կարևոր է արագացնել պարենային անվտանգության տեղեկատվության թողարկման ժամկետները: Սա վերաբերվում է թե՛ պարենային հաշվեկշռի վիճակագրության և թե՛ կենսամակարդակի հետազոտության ամփոփմանը:

Գրականություն

References (with English translation and transliteration)

- **Ավտիսյան Ս. (2020)**, Հայաստանի պարենային անվտանգության ապագան այնքան էլ անվտանգ չէ, ՀՊՏՀ, Ամբերդ հետազոտական կենտրոն
- ՀՀ վիճակագրական կոմիտե (2020) «Պարենային ապահովություն և աղքատություն, հունվար-սեպտեմբեր»
- ՀՀ վիճակագրական կոմիտե (2019) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»
- The Economist Inteligence Unit Limited (2019) “GLOBAL FOOD SECURITY INDEX 2019: Strengthening food systems and the environment through innovation and investment”
- Национальный статистический комитет Кыргызской Республики (2020) Информационный бюллетень Кыргызской Республики по продовольственной безопасности и бедности, 1/2020”

Ընդունված է 4.12.2021
Գրախոսված է 11.2.2021

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ОЦЕНКИ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ В АРМЕНИИ. ВОЗМОЖНОСТИ УЛУЧШЕНИЯ

Арутюнян К.Ш., Акобян Л.Г., Шагинян М.С.

Аннотация. Полная и комплексная оценка ситуации с продовольственной безопасностью, анализ тенденций и ранние прогнозы - не простые задачи, поэтому требуют использования улучшенной методологической базы и инструментария.

Статья посвящена представлению практических рекомендаций по совершенствованию основы, методологии и структур оценки продовольственной безопасности Республики Армения. В основном статья относится к разработке методологии, обеспечивающей полноту и всесторонность оценки. Также представлены подходы к разработке системы оценки продовольственной безопастности.

Вы~~По сути, основные вы~~явленные проблемы - это, с одной стороны, устранение основных недостатков существующей методологии в части повышения точности и адекватности оценок самодостаточности, а с другой стороны, необходимость проведения комплексных и совокупных оценок продовольственной безопасности.

Ключевые слова: продовольственная безопасность, продовольственный баланс, предложение и потребление пищи, энергетическая ценность потребления, совокупные и комплексные оценки безопасности.

METHODOLOGICAL FRAMEWORK OF FOOD SECURITY ASSESSMENT IN ARMENIA. DEVELOPMENT OPPORTUNITIES

Harutyunyan K.Sh., Hakobyan L.G., Shahinyan M.S.

Abstract. Comprehensive assessment of food security situation, analyses of its trends and early projections are not a simple task and, therefore, requires using a well-developed methodical framework and tools.

The present article is dedicated to the food security assessment framework in Armenia, as well as identification of shortfalls in its methodology and drawing practical recommendations on improvement. It overall discusses such issues as development of existing methodology, ensuring comprehensiveness of assessment, as well as suggests approaches to the development thereof.

In essence, the main identified problems refer to the main omissions and shortcomings in the existing methodology on one hand (from the perspective of improving the accuracy of food balance sheet and self-sufficiency estimates and relevance thereof), while on the other hand – to the need to apply comprehensive food security assessments.

Keywords: Food Security, Food Balance, Self-Sufficiency Level, Food Supply and Utilization, Energetic Value of Consumption, Aggregated and Integral Indicators of Food Security.